ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 11

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան
Երկու հազար տասներկու թվականի մայիսի տասնչորսին

ՀՀ քաղ. Շողերինա Ստեփանի Մկրտչյանը, հաշվառված՝ ՀՀ ք. Երևան, կոմիտաս 7/1-19, անձն. սերիա AH 0624600 տրված 14.07.2008թ., 004-ից, այսուհետ՝ «Վարձատու», մի կողմից, **«ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարական հիմնարկ /վկայական 01 Բ 002258, հաշվ. ամս. 08.12.2008թ., ՀՀ Պետական Ռեգիստրի կենտրոնի տ/բ** կողմից, գտվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացու թիվ 3/ որի անունից հանդես է գալիս ՀՀ քաղ. Լևոն Հրայրի Հարությունյանը **/լիազորագիր N 14182/18, տրված 11.05.2012թ. ՀԱ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից/** այսուհետ՝ «Վարձակալ» մյուս կողմից, կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Վարձատուն պարտավորվում է՝

1.1.Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ Երևան, Շենգավիթ **համայնք, Արշակունյաց պող. հ. 127/21/հարյուր քսանյոթ կոտորակ քսանմեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքից՝ հ.18/տասնութ/ մասնաշենքը՝ 4561.0/չորս հազար հինգ հարյուր վաթսունմեկ ամբողջ զրո տասնորդական/ քմ մակերեսով, շինություններ՝ա/ հ. 17/տասնյոթ/ պահակատուն՝ 24.0/քսանչորս ամբողջ զրո տասնորդական/ քմ, հ. 16/տասնվեց/ ավտոտնակը՝ 36.5/երեսունվեց ամբողջ հինգ տասնորդական/ քմ** /այսուհետ «Օբյեկտ», գույքի նպատակային նշանակության համապատասխան օգտագործելու համար:

1.2. Վարձատուն վարձակալության հանձնվող Օբյեկտի սեփականատերն է, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթով՝ ՀՀ **կառավարությանը առընթեր անշարժ** գույքի **կադաստրի պետական կոմիտեի «Շենգավիթի»** տարածքային ստորաբաժանման կողմից տրված Անշարժ գույքի սեփականության իրավունքի Վկայականի, գրանցման հ. 2022792, տրված 04.05.2006թ.:

Օբյեկտը գրավի, կալանքի, արգելանքի տակ չէ՝ **համաձայն Միասնական Տեղեկանքի՝ հ. ՄՏ-02052012-01-0149, տրված 02.05.2012թ.,** ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի **«Երևանի»** սպասարկման գրասենյակի կողմից: Լր. նշումներ անշարժ գույքից մասեր տրված են վարձակալության:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

Վարձատուն իրավունք ունի՝

2.1.Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.2. Վարձակալից պահանջել Գույքը պահել սարքին և պատշաճ վիճակում և վերադարձնել սույն պայմանագրի 1.1. կետում նշված վիճակում:

Վարձատուն պարտավոր է՝

2.3.Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո 1/մեկ/ օրվա ընթացքում, ընդ որում, գույքի ընդունման պահին կողմերը կազմում են հանձնման ընդունման ակտ:

2.4.Գույքը տրվում է վարձակալին իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2.5.Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում և դրա բոլոր պատկանելիքներով ու իրեն վերաբերող փաստաթղթերով:

2.6. Վարձակալին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին:

2.7. Վարձակալին զգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավ, սերվիտուտ և այլն/ մասին:

Վարձակալը պարտավոր է՝

2.8.Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.9.Կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը վարձատուի համաձայնությամբ:

2.10.Գույքը վերադարձնել վարձատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

2.11.Վճարել իր օգտագործված էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսի վճարները, այլ կոմունալ ծախսերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկային պարտավորությունները:

3.Հաշվարկները և պայմանագրի գործողության ժամկետը

3.1. Սույն պայմանագիրը գործում է 14.05.2012./երկու հազար տասներկու թվականի մայիսի տասնչորսից/՝ 5/հինգ/ տարի ժամկետով:

Սույն պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 01.05.2012թ./երկու հազար տասներկու թվականի մայիսի մեկից/ փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 6.900.000 /վեց միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:

Պայմանագրի գինը 2012թ. համար սահմանվում է 55.200.000/հիսունհինգ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալը վարձավճարը կվճարի ամսեկան կտրվածքով մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը/տասնհինգը/, իսկ 2012թ. դեկտեմբեր ամսվա հատուցվելիք գումարը վարձատուին կտրամադրվի մինչև դեկտեմբերի 25-ը /քսանհինգը/ որպես կանխավճար, որի մարումը կիրականացվի հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝կատարվող վճարումից նվազեցնում կատարելու ձևով: Վարձավճարը կվճարվի փոխանցումով՝ «Յունիբանկ» ՓԲԸ-ի թիվ 241001025279 հաշվե համարին:

4.Կողմերի պատասխանատվությունը

4.1.Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.2.Վարձատուն պատասխանատվություն չի կրում գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը գնելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

4.3.Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի նկատմամբ 0.5տոկոսի չափով:
4.4.Սույն պայմանագրով նախատեսված տարածքի հանձնման ժամկետի խախտման համար վարձատուի, նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չկատարած մասի գումարի 0.05տոկոսի չափով:
4.5.Սույն պայմանագրով նախատեսված՝ վարձատուի նկատմամբ հաշվարկված տույժերը, տուգանքները հաշվարկվում են և հաշվանցվում են վարձատուի վճարման ենթակա գումարից:
4.6.Սույ պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:
4.7.Տուգանքի և տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
7.8.Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:
4.9.Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առարկության դեպքում՝ պայմանով, որ վարձակալի մոտ չի վերացել առարկայի օգտագործման պահանջը:

5.Այլ պայմաններ

5.1.Կողմերը ցանկացած ժամանակ կարող են հրաժարվել պայմանագրից 30/երեսուն/ օր առաջ գրավոր ծանուցելով միմյանց այդ մասին:
5.2.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 4/չորս/ օրինակից, մեկ օրինակը մնում է նոտարական գրասենյակում, երեք օրինակները տրվում են կողմերին:Վավերացված կամ հաստատված բոլոր օրինակներն ունեն հավասար իրավաբանական ուժ, սակայն նոտարի վավերացված կամ հաստատված փաստաթղթի բնօրինակը համարվում է նոտարի մոտ պահպանվող օրինակը, իսկ բնօրինակի և մյուս օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է բնօրինակին:
5.3.Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30/երեսուն/ օրվա ընթացքում:

Վարձատու՝ _____

Վարձակալ՝ _____ Լիազ.անձ

Հայաստանի Հանրապետության անունից,
Երկու հազար տասներկու թվականի մայիսի տասնչորսին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Երևան քաղաքի «Մալաթիա» նոտարական տարածքի նոտար Թեհմինա Ավագյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և նշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են: ՀՀ քաղ. օր-ի 301-րդ հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում երեսունօրյա ժամկետում:

Գրանցված է սեղանամատյանում՝ 1127-ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների:

Նոտար՝ Թեհմինա Ավագյան

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան

Երկու հազար տասնչորս թվականի նոյեմբերի հինգին

ՀՀ քաղ. **Շողերինա Ստեփանի Մկրտչյանը,** անձն. սերիա՝ AM0614832 տրված 25.01.2012թ. 004-ից, Հաշվառված՝ ք. Երևան, Կոմիտաս 7/1-19 հասցեում,, այսուհետ՝ Կողմ 1, մի կողմից և <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը, վկայական 01 Բ 968119, գրանցված 23.06.2014թ. ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնի կողմից (գրանցման հ. 273.185.818119), իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Մ.Ադամյան 1, ի դեմս լիազորված անձ՝ Արթուր Աբամյանի /նույնականացման քարտ 000410449, տրված 24.02.2014թ. 005-ի կողմից/, որը գործում է ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի կողմից 05.11.2014 թվականին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ Կողմ 2, մյուս կողմից, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

մեր միջև երկու հազար տասներկու թվականի մայիսի տասնչորսին կնքված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի /որով Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն է հանձնել ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Արշակունյաց պողոտա, հ. 127/21 հասցեում գտնվող անշարժ գույքից հատվածներ/ մեջ (վավերացված 14.05.2012թ.. ՀՀ Երևան քաղաքի <<Մալաթիա>> նոտարական տարածքի նոտար Թեհմինա Ավագյանի կողմից, գրանցված սեղանամատյանում հ. 1787) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.Պայմանագրի 1.1. կետը շարադրել հետևյալ կերպ՝

1.1. Սույն պայմանագրով՝վարձատուն պարտավորվում է վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել՝ ՀՀ **ք.Երևան, Շենգավիթ համայնք, Արշակունյաց պող., N 127/21 /հարյուր քսանյոթ կոտորակ քսանմեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքից՝ հ. 18/տասնութ/ մասնաշենքից 4520.6 /չորս հազար հինգ հարյուր քսան ամբողջ վեց տասնորդական / քմ մակերեսով հատվածը, շինություններ՝ ա/ հ. 17/տասնյոթ/ պահակատուն՝ 24.0 /քսանչորս /քմ, հ. 16/տասնվեց/ ավտոտնակը՝ 36.5/երեսունվեց ամբողջ հինգ տասնորդական/ քմ,** այսուհետ՝ Օբյեկտ՝ գույքի նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

1.2. Պայմանագրի 3.1. կետի 3 պարբերությունը շարադրել հետևյալ կերպ՝

Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 6.839.716 /վեց միլոն ութ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:

2.Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

3.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է ՀՀ Երևան քաղաքի <<Մալաթիա>> նոտարական գրասենյակում, մյուս օրինակները տրվում են կողմերին: Օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

4.Սույն համաձայնագրի հետ կապված ծախսերը կրում են երկու կողմերը հավասարաչափ:

5.Համաձայնագիրը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց կողմերի համար և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:

Կողմերի ստորագրությունները՝

ԿՈՂՄ 1՝ _____

ԿՈՂՄ 2՝ _____

Հայաստանի Հանրապետության անունից,

Երկու հազար տասնչորս թվականի նոյեմբերի հինգին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Երևան քաղաքի <<Մալաթիա>> նոտարական տարածքի նոտար՝ Թեհմինա Ավագյանիս կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, իրավունակությունը և գործունակությունը ստուգված է:

Գրանցված է սեղանամատյանում՝ 5787 ով:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն

<<Պետական տուրքի մասին>> և <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքների:

Նոտար՝ Թեհմինա Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «14» Նոյեմբերի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Շենգավիթ Արշակունյաց պողոտա 127/21

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

նոտարի 14.05.2012թ. թիվ 1787 վարձակալության պայմանագիր, նոտարի 05.11.2014թ. թիվ 5787 պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	**01-011-0399-0061-001-000**	**Բուժ. կայան**	**4581.1 ք.մ.**	**ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը 5 տարի: 4581.1ք.մ. տարածքից՝ հ.18 մասնաշենք՝ 4520.6ք.մ., հ. 17 պահակատուն՝ 24.0ք.մ., հ.16 ավտոտնակ՝ 36.5ք.մ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Միքայել Սարոյան

զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող սպասարկման գրասենյակի
Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
Երկու հազար տասնհինգ թվականի հոկտեմբերի ութին 08.10.2015 թվական

Կողմ 1

ՇՈՂԵՐԻՆԱ ՍՏԵՓԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ծնված՝ 04/05/1975 թվականին, անձնագիր՝ AM0614832, տրված 004-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 25/01/2012, ՀԾՀ՝ 5405750484, հաշվառված՝ քաղաք Երևան, Արաբկիր համայնք, Կոմիտասի պողոտա, 7/1-19 հասցեում.

Լիազորված անձ՝ ՀԱՅԿ ԵՂԻՇԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ, ծնված՝ 10/03/1956 թվական, անձնագիր՝ AK0533087, տրված 004-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 18/06/2010 թվական, ՀԾՀ՝ 2003560408, /լիազորագիր տրված 04/08/2015 թվականին «ՄԱԼԱԹԻԱ» նոտարական տարածքի նոտար՝ ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ կողմից.

Կողմ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ՝ ի դեմս «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Պետական կառավարչական հիմնարկի, գրանցման համար՝ 273.185.818119, ՀՎՀՀ՝ 02629081, /ղեկավար՝ ԱՇՈՏ ԲԱԲԿԵՆԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ/ լիազորված անձ՝ ԼԵՎՈՆ ՀՐԱՅՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՈՂԵՐԻՆԱ ՍՏԵՓԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ լիազորված անձ՝ ՀԱՅԿ ԵՂԻՇԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Պետական կառավարչական հիմնարկի, լիազորված անձ՝ ԼԵՎՈՆ ՀՐԱՅՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ այսուհետ՝ Կողմեր.

ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Երկու հազար տասնհինգ թվականի մայիսի տասնչորսին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում (վավերացված 14.05.2012 թվականին Հայաստանի Հանրապետության Մալաթիա նոտարական տարածքի նոտար Թեհմինա Ավագյանի կողմից, գրանցած սեղանամատյանում 1787 համարով) կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Պայմանագրի 1.1 կետը շարադրել հետևյալ կերպ.

Սույն պայմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Շենգավիթ համայնք, Արշակունյաց պողոտա, թիվ 127/21 /հարյուր քսանյոթ կոտորակ քսանմեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքից՝ հ. 18 /տասնութ/ մասնաշենքից 4 332.08 /չորս հազար երեք

հարյուր երեսուներկու ամբողջ զրո ութ/ քառակուսի մեկերեսով հատվածը, շինություններ՝ ա/հ. 17 /տասնյոթ/ պահակատուն՝ 24.0 /քսանչորս/ քառակուսի մետր, հ. 16 /տասնվեց/ ավտոտնակը՝ 36.5 /երեսունվեց ամբողջ հինգ/ քառակուսի մետր, այսուհետ՝ Օբեկտ՝ գույքի նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

2. Պայմանագրի 3.1 կետի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 6 558 250 /վեց միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար երկու հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար, ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:

3. Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է Հայաստանի Հանրապետության «Մալաթիա» նոտարական գրասենյակում, մյուս օրինակները տրվում են կողմերին, որոնցից մեկ օրինակը ներկայացվում է՝ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում: Օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

4. Սույն համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարվում է Կողմերի կողմից:

5. Համաձայնագիրը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց կողմերի համար և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Կողմ 1՝
ՇՈՂԵՐԻՆԱ ՍՏԵՓԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ
լիազորված անձ՝
ՀԱՅԿ ԵՂԻԵԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ----------

Կողմ 2՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Պետական կառավարչական հիմնարկի
լիազորված անձ՝
ԼԵՎՈՆ ՀՐԱՅՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ----------

Երկու հազար տասնհինգ թվականի հոկտեմբերի ութին, սույն անշարժ գույքի վարձակալության պայմանագիրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը վավերացվել է «ԱՐՄԱՎԻՐ» նոտարական տարածքի նոտար՝ ՑՈՒՐԱ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՍ կողմից: Պայմանագիրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված է: Համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 6999 ով:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտարիատ՝ Յուրա Խաչիկի Եղիազարյան

ՀԱՏԱԿԱԳԻԾ

1 : 2000



1 — 2	18,2
2 — 3	8,2
3 — 4	29,1
4 — 5	676,8
5 — 6	45,0
6 — 7	4,7
7 — 8	168,5
8 — 9	58,04
9 — 10	4,7
10 — 11	37,6
11 — 12	28,8
12 — 13	61,0
13 — 14	39,6
14 — 15	11,8
15 — 16	55,4
16 — 17	28,6
17 — 18	6,2
18 — 19	14,6
19 — 20	12,5
20 — 21	7,5
21 — 22	15,7
22 — 23	3,7
23 — 24	82,5
24 — 25	12,8
25 — 26	62,8
26 — 27	26,5
27 — 28	75,65
28 — 29	105,1
29 — 30	13,6
30 — 31	56,7
31 — 32	66,0
32 — 33	24,0
33 — 34	1±4,0
34 — 35	6,9
35 — 36	5,8
36 — 37	85,9
37 — 38	7,0
38 — 39	42,0
39 — 1	19,0

1	Բոմ. փայտ
2	Արտ. նավամատույց
3	Ծաղկաման
4	Ֆրոնտոնում
5	Մեկուսի գրանցակետ
6	Վերակազմ-ախտորոշ. մաս
7	Ծառայող. բնակելի արտ.
8	Բանջարի նախնական արտ.
9	—— // ——
10	Դիտակետում
11	Դիտարան
12	—— // ——
13	Երբեք գնում
14	Նարդի վերանորոգ մաս.
15	Գրեթե տեսք
16	Սերտոնում
17	Դիտակետում
18	Ջր. մեր. ստրք. երբեք. մաս.
19	Գրեթեգարան
20	Փարթամ
13'	Փայտարան ստորգետնյա

ՏԵՍՈՒՉ — Հ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԲԱՇԽԻ ՊԵՏ — Հ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՍԱՓՄԱԳԾԱՅԻՆ ՊԵՏԱՐԱՆ

(18)

ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մասշտաբ 1:

Ա4 0086533



Քաղաքի ատեստ՝ _____ Ստորաբաժանման դեկավար՝ _____

ՀԱՏԱԿԱԳԻԾ

մասշտաբ 1:

№ 0080

(16) 1 հարկանի



(17) 1 հարկանի



Գլխավոր՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ճարտար պետ՝ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Ստորաբաժ. ղեկավար՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10

14.05.2012թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1787 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան **«__»_____2017թ**

Մենք՝ Շողերինա Ստեփանի Մկրտչյանը, /անձնագիր AM0614832, տրված 25.01.2012թ. 004-ի կողմից, հաշվառված՝ ք. Երևան, Կոմիտաս 7/1-19/ այսուհետ՝ <<ՎԱՐՁԱՏՈՒ>>, մի կողմից և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության շինարարական ծրագրերի համակարգման բաժնի ճարտարագետ-շինարար Արթուր Եղիազարյանը /անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ. 005-ի կողմից, հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված, շենք 22, բն. 3/ այսուհետ՝ <<ՎԱՐՁԱԿԱԼ>>, մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով 14.05.2012թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1787 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 3.1 կետը, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել 2017թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:

1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2017թ. հունիսի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

1.3 Պայմանագրի 3.1 կետի երկրորդ պարբերության <<Վարձավճարի չափը կազմում է ամսական 6.900.000 (վեց միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:>> բառերը շարադրել հետևյալ կերպ՝ <<Վարձավճարի չափը կազմում է ամսական 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը: >>

2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու/3/ հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4 Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ 005-ի կողմից

_____ Ա.Եղիազարյան

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

քաղաքացի Շողերինա Ստեփանի Մկրտչյան
ք. Երևան, Կոմիտասի 7/1, շ., բն. 19
<<Յունիբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 241001025279
AM 0614832 004 25.01.2012թ.

_____ Շ.Մկրտչյան

Հավելված թիվ 1
14.05.2012թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1787 համարով
գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում
փոփոխություններ կատարելու մասին թիվ 10 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
	Ծառայության անվանումը	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
1.	ք.Երևան, Արշակունյաց պողոտա 127/21 հասցեում գտնվող անժարժգույքի վարձակալության ծառայություն	6 558 250	13 116 500	19 674 750	26 233 000	32 791 250	35 791 250	38 791 250	41 791 250	44 791 250	47 791 250	53 791 250	**53 791 250**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ
Սահակյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան
անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ 005-ի
կողմից**

---------- Ա.Եղիազարյան

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

**քաղաքացի Շողերինա Ստեփանի Մկրտչյան
ք. Երևան, Կոմիտասի 7/1, շ., բն. 19
<<Յունիբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 241001025279
AM 0614832 004 25.01.2012թ.**

---------- Շ.Մկրտչյան

Նոտարական ակտի կոդ: 516-20170517-9-1262291
Նոտարական ակտի գաղտնագիր: GBTHQC

Երկու հազար տասնյոթ թվականի մայիսի տասնյոթին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ **ՄԱԼԱԹԻԱ** նոտարական տարածքի նոտար **ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՍ** կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 611-րդ հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30/երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյանում 1393 ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Աննա Ռազմիկի Թովմասյան

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի
ղեկավար պրն.Ա.Սահակյանին

ք.Երևան, Արշակունյաց 127/21
հասցեի սեփականատեր
Շ.Սկրտչյանից

Խնդրում ենք մեր միջև 08.10.2015թ-ին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի 2 կետը շարադրել հետևյալ կերպ. վարձավճարը կազմում է ամսեկան 3 000 000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումար, ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:

Շողերինա Սկրտչյան
ք.Երևան, Կոմիտաս 7/1-19

16.05.2017

093-10-70-60

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳԱՅՈՒՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԱՆՇԱՐԺԱՎԱՃԱՌ
ՄՈՒՏՔ՝ 25233-17
«16» 05 17

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 11

14.05.2012թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1787 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

գյումրի «14» մայիսի 2018թ

ՀՀ քաղ. Շողերինա Ստեփանի Մկրտչյանը, /անձնագիր AM0614832, տրված 25.01.2012թ. 004-ի կողմից, հաշվառված՝ ք. երևան, Կոմիտաս 7/1շ., բն. 19, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ», մի կողմից և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ա. Սահակյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության շինարարական ծրագրերի համակարգման բաժնի ճարտարագետ-շինարար Արթուր Լևոնի Եղիազարյանը /անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ. 005-ի կողմից, հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված, 22 շենք, բն.3/ այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ», մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 14.05.2012թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1787 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 3.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով ՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել 2018թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ՝ համաձայն հավելված 1-ի:

1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2018թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս /4/ հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4 Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

«ՎԱՐՁԱԿԱԼ»	«ՎԱՐՁԱՏՈՒ»
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7 ՀՎՀՀ 02647057 Հ/Հ 900011054013 Կենտրոնական գանձապետարան Գործառնական վարչություն ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահայանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ. 005-ի կողմից	**քաղաքացի Շողերինա Ստեփանի Մկրտչյան ք. Երևան, Կոմիտասի 7/1 շ., բն. 19 «Յունիբանկ» ՓԲԸ Հ/Հ 241001025279 AM 0614832, տրված 25.01.2012թ, 004-ի կողմից**
---------- **Ա.Եղիազարյան** (ստորագրություն)	---------- **Շ.Մկրտչյան** (ստորագրություն)

Հավելված թիվ
14.05.2012թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1787 համարով գրանցվա
անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ
կատարելու նպատակով կնքված թիվ 11 համաձայնագր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
Ծառայության անվանումը	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Երևան, Հաշակունյաց հրապարակ 127/21 հասցեում գտնվող անշարժգույքի վարձակալության ծառայություն	3 000 000	6 000 000	9 000 000	12 000 000	15 000 000	18 000 000	21 000 000	24 000 000	27 000 000	30 000 000	36 000 000	36 000 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

«ՎԱՐՁԱԿԱԼ»

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահայանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ. 005-ի կողմից

---------- **Ա.Եղիազարյան**
(ստորագրություն)

«ՎԱՐՁԱՏՈՒ»

քաղաքացի Շողերինա Ստեփանի Մկրտչյան
ք. Երևան, Կոմիտասի 7/1 շ., բն. 19

«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ 241001025279

AM 0614832, տրված 25.01.2012թ, 004-ի կողմից

---------- **Շ.Մկրտչյան**
(ստորագրություն)

Նոտարական ակտի կոդ: 516-20180213-117-2220279
Նոտարական ակտի գաղտնագիր: JXU8HD

Երկու հազար տասնութ թվականի փետրվարի տասներեքին, սույն համաձայնագիրը վավերացվել է, **ՄԱԼԱԹԻԱ** նոտարական տարածքի նոտար՝ **ԱՆՆԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՍ** կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը և լիազորությունները ստուգված են, գործունակությունը՝ պարզված: Նշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են գրանցման աշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30/երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 611-րդ հոդվածի:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 0407 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Անանա Ռազմիկի Թովմասյան

1/1